


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****«ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐՈՒ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԹԻԻ**

Կ. Թ. Գոլէճի 52րդ տարեգարձին առթիւ Մանչեսթրու Բարձրագոյն Վարժարանին մէջ Տր. Ծ. Մէրիլ ճառ մը խօսեցաւ, որուն մէկ ամփոփումն է հետեւեալը. —

1876, Հոկտ. 11 «Հիմնադիրներու Օր»-ուն թուականն է, երբ ամեն տարի առաջին Ֆրէշմէն կարգի Գոլէճ ընդունուելուն տարեկարձը կը տօնուի պաշտօնապէս: 1874 ին նախապատրաստական դպրոց մը կար Փրօֆ. Ալեքսան Պէյզեանի տեսչութեան տակ, որ երկամիայ ուսումնական շրջան մը լրացնելով Ամերիկայէն նոր վերադարձած էր: Յիշեալ նախապատրաստականը 1872 ին գոյութիւն առած էր: Գոլէճի մը հիմնարկութեան համար 1871ին կարգ մը նախաքայլեր առնուած էին, իսկ զայն հիմնելու գաղափարը ասկէ ալ առաջ զբաղեցուցած էր միտքերը:

Ամէն երկրի մէջ, ամեն դարու մէջ եւ ամէն մարզի մէջ գտնուած են մարդիկ՝ որոնք երազած են այնպիսի գաշտերու մասին, զոր մինչեւ հիմա ոեւէ մէկը չէ կրցած տեսնել, խորհած են այնպիսի զործերու մասին զոր ուրիշները չեն համարձակած կատարել, խուզարկած եւ քննած են այնպիսի հարցեր որոնք ոեւէ մէկուն ուշադրութեան առարկայ չեն ե-

ղած: Ասոնք զործագրած են չկատարուած գործեր, զրաւած են անկոխ գետիններ, գտած են նոր ճշմարտութիւններ, յանդգնելով մարդկային նախկին փորձառութեանց սահմաններէն անդին անցնիլ: Այսպիսի անհատներ մարդկութեան յառաջապահ առաջնորդներն են:

Կ. Թ. Գոլէճի մարդերը այսպիսի մարդեր էին: Ասոնք անդոյ իրերու մասին երազեցին եւ որոշեցին իրենց երազը իրականութեան վերածել: Ապա յառաջ անցնելով ասոնք կատարեցին այնպիսի բաներ զորոնք ուրիշները չէին գործած:

Այս թուականէն առաջ ծովագերհայ վայրերը Գոլէճներ հաստատուած էին, Բօպէրթ Գոլէճ՝ Կ. Պոլսոյ մէջ, եւ Սուրիական Բոզ. Գոլէճ՝ Պէյրութի մէջ, ուր ներքին գաւառներէն շատ սակաւաթիւ երիտասարդներ առիթը եւ դիւրութիւնը պիտի ունենային յաճախելու: Հետեւաբար անոնք նոր բան մը ընելու, այսինքն ներքին գաւառներէ մէկուն մէջ Գոլէճ մը հիմնելու նպատակը ունեցան:

Բօպէրթ Գոլէճ Սայրլս Համլինի կողմանէ հիմնուած էր. իսկ Պէյրութի Գոլէճի հիմնադիրը Տօքթ. Պլիւ էր, եւ Սուրիական երեցական Առաքելութեան հովանաւորութիւնը կը վայելէր: Այս մարդիկ նոր գաղափար մը յղադրան, իրենք Գոլէճ մը հիմնել ուղեցին եւ փափաքեցան Ամերիկացիներէն խնդրել իրենց օժանդակելու համար:

Բօպէրթ Գոլէճի հիմնարկութիւնը կարելի եղաւ Մր. Բօպէրթի նուիրատուութեամբը. և Պէյրուսի Գոլէճի տնտեսականը ապահովելու մէջ մեծ բաժին ունեցաւ Տաճ ընտանիքը: Այս մարդիկ դարձեալ նոր ուղի մը գծեցին իրենց համար. անոնք փափաքեցան որ առաջին տուողները իրենք ըլլան: Առաջին նուիրատուներն եղան Ատուր Աղա Նիպիպլեան և Յակոբ Աղա Բիւրքճեան, որոնք 400 օսմ. ոսկի նուիրեցին: Այնթապի ժողովուրդին նուէրներուն ընդհանուր գումարը 1600 օսմ. ոսկիի հասաւ այն ատեն՝ երբ Գոլէճը տալաւին գոյութիւն չունէր, և յոյս կար միայն ապագային անոր կարելիութեան մասին: Այսպէս անոնք կ'ընէին այնպիսի բան մը, զոր մինչև հիմա ոեւէ մէկը չէր կատարած Գոլէճ մը հիմնելու համար:

Էայն մէկը կրնայ հարցնել թէ ինչո՞ւ այս մարդիկ այն ատեն ա'յնչափ գումար մը նուիրեցին. քանզի անոնք աւելի լաւ մարդեր ուզեցին յառաջ բերել. քանզի անոնք աւելի բարձր քարոզչի մը, աւելի վեհ դաստիարակի մը, աւելի ազնիւ մարդու մը զաղափարը ունէին: Հետեւաբար անոնք իրենց նիւթական հարստութիւնը գործածեցին այս գաղափարը իրականացնելու համար:

Այն ամերիկացիք, որոնց օժանդակութեան դիմում եղած էր, այս դասակարգէ մարդիկ էին, որոնք մինչև հիմա ոեւէ մէկուն չ'առաջարկած բաները կատարելու համար կարգադրութիւններ ըրին:

Անոնք՝ թէ՛ տեղացի և թէ՛ օտար քրիստոնեաներու Բրիստօսի մէջ հաւասար իրաւունքով եղբայրութիւնը իբր տուեալ նկատելով՝ Գոլէճի վարչութեան իբր հիմնական ուղեցոյց նոր սկզբունք մը ընդունեցին. անոնք առաջարկեցին որ երկու կողմերն ալ հաւասար բաժին մը ունենան պատասխանատուութեան մէջ և հաւասար թիւով ներկայացուցիչներ ունենան Վարչական Ժողովի մէջ:

Երկու անձեր 1872ին Ամերիկա զրկուցան, Ա. Յ. Պէզճեան՝ բնական գիտութիւններու գասաւանդութեանց պատրաստուելու համար և Տր. Թրօպրիճ՝ բարեկամներ և նոր գրամ ապահովելու համար: Ծամբան Տօքթ. Թրօպրիճ հեռագիր մը ստացաւ, որուն մէջ իրեն կը յայտնուէր թէ Ամերիկա չգայ. բայց

սա իր գրպանին մէջ պահեց հեռագիրը և ճամբան շարունակեց:

Մր. Թրօպրիճ Ամերիկայի մէջ Ամերիկեան Պօրտէն Տր. Քլարքի օժանդակութեամբ խումբ մը մարդիկ գտաւ, որոնք տրամադիր գտնուեցան գոլէճը հովանաւորելու և անոր օգնելու: Ասոնց մէջ կը գտնուէին Եէյլ համալսարանի նախագահը, Նիւ Եօրքի ժողովական եկեղեցիի հովիւը, և Պոսդոնէն ծանօթ երէք վաճառականներ: Այս մարդիկը, որ խնամակալ մարմինը պիտի կազմէին, վարչական կարգ մը նորութիւններ կիրարկելու զեցին: Անոնք այնպէս յարմար դատեցին որ Թուրքիոյ մէջ խառն մարմին մը վարչութեան մասնակցի, և վերջապէս բոլոր վարչութիւնը անոր յանձնուի: Այս մեզի շատ բնական կը թուի այսօր. բայց պէտք է ըսել թէ 1872 ին մէջ նորութիւն մ'էր այս ծրագիրը, որուն յղացողները նոր ուղի գծող յառաջապահ ռահվիրաներ էին:

Գոլէճի պատմութեան մէջ՝ անոր գոյութեան սկիզբէն իվեր՝ արձանագրուած են շատ մը զրուագներ, որ կը պատմեն նոր ուղիներու վրայ առաջնորդող գործունէութիւններու մասին: Այնթապի Գոլէճը, որ իրեն յատուկ սկզբունքներու համեմատ հաստատուած է, ուրիշներուն չըրած շատ մը գործեր կատարած է:

Հալէպի մէջ եղող Վարչական Մարմինը վերջին հինգ տարիներու միջոցին՝ Մանչերու Բարձրագոյն Վարժարանին օգնած է Գոլէճը վերահաստատելու գիտումով: Հալէպի մէջ ալ Գոլէճը ուրիշ վարժարաններու մէկ մրցակիցը կամ ընդօրինակիչը ըլլալու չէ, այլ իր բուն նպատակին ձգտելով պէտք է ընէ այնպիսի բաներ, զոր ուրիշները չեն կատարած: Մինչ Գոլէճ լեզուներու ուսուցումը և գործնական կեանքի համար պատրաստութիւնը նկատի կ'առնէ, ան կ'ընդունի թէ իր բարձրագոյն նպատակն է քաղաքացիական կրթութիւնը և անձնաւորութեան զարգացումը: Ան կը փափաքի որ է'ն աղքատ իսկ պատահութիւնը ունենայ ուսանելու, աշակերտներուն գործ հայթայթելով պահած ձեռական աշխատութիւններու բաժնին մէջ: Ան կը փափաքի որ ամէն ցեղէ, դաւանանքէ մանուկներ կարենան հասարակաց միջավայրի մէջ ընկերակցիլ և կարենան դպրո-

«ՆՈՐ ԱԽԵՏԱԲԵՐ»ը իր երկրորդ տարուան առաջին թիւէն սկսեալ պիտի հրատարակուի 16 էջ Հայերէն եւ 16 էջ Տաճկերէն, նոյն բովանդակութեամբ: Կը խնդրենք որ հետեւեալ հարցարանին Ձեր պատասխանը գրելով առաջին առթիւ խմբագրութեան հասցէին ղրկէք զայն:

Հայերէն կ'ուզէք.....

Թիւը.....

Տաճկերէն կ'ուզէք.....

Թիւը.....

Նուէր.....


Դրամական.....

Որո՞ւ հասցէին.....

Ի՞նչ դիտողութիւններ եւ թեւադրութիւններ ունիք թերթին
Լեզուին մասին,
Պարունակութեանը մասին,
Ձեւի և այլնի մասին,

Բ. տարուան առաջին երկու թիւերը պիտի ղրկուին իբր նմոյշ,
զոր չվերադարձնողները պիտի նկատուին կանոնաւոր բաժանորդներ:
Տարեկան բաժնեգինն է Սուրիոյ եւ Լիբանանի համար 1.50 սուրիական ոսկի, արտասահման՝ 1.50 տոլար:

Ն. Ա. ի Վարչութիւն



յին մէջ միատեղ ապրիլը սորվիլ, որպէսզի գարոցէն դուրս ալ միասին ապրելու պատրաստուած ըլլան: Անոր նպատակն է իբր կրթութեան միջոցներ գործածել գիտական աշխատանոցը, գրադարանը և անձնական խուզարկութիւնները՝ ուսուցիչներու հսկողութեան տակ: Ան կը սորվեցնէ թէ հոգեւոր ճշմարտութիւնները դաւանանք մը կամ ծէս մը չեն, այլ տեսակ մը կեանք՝ որ մտաւորապէս ըմբռնելի և գործնականապէս ցուցադրելի է: Ան կը հաւատայ որ հոգեւոր կեանքը բարձրագոյն մարդկութեան հիմը կը կազմէ:

Գոլէճի շերմ փափաքն է նաև մարդեր պատրաստել նոր շաւիղներու վրայ առաջնորդ ըլլալու համար: Մենք չորս կողմէ արգելափակուած ենք ամէն տեսակ սահմաններով: Պէտք ունինք այնպիսի մարդերու որոնք կարենան այս պատուարները տեսնել, որոնք կարենան երազել թէ ասոնցմէ անդին ինչե՛ր կան, որոնք այս սահմաններէն անդին անցնելով կարենան գտնել նոր իրողութիւններ, նոր ճշմարտութիւններ, նոր կեանքի միջոցներ և աւելի լայն կեանք մը: Այո՛, պէտք ունինք անհատներու որոնք կարենան մարդերը առաջնորդել և անոնց յառաջապահները ըլլալ ծառայութեան եւ նուիրումի մէջ:

Այս առաւօտ ներկայ գտնուողներս իբր նպատակ ընդունինք ա՛յսպիսի մարդեր ըլլալ:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԻՆՔՆԱՍՓՈՓՄԱՆ ԽՈՂՆԵՐ

Կեանքը ինքն իր մէջ:

Երբ ընդունինք որ շատ վաղանցուկ է այս կեանքը և ըստ այնմ ըմբռնենք անոր արժէքը, բնական փափաք մը կ'արթննայ մեր մէջ թէ՛ ի՛նչպէս կրնանք արդիւնաւորել կեանքը և ապա չուել անցնիլ այս առժամայ օթեւանէն:

Կեանքը վերլուծելու գծուարին պաշտօնը վերջնող խմաստասէրներ և ընկերաբաններ շատ աքներ և ջանացեր են պարզաբանելու այս հարցը: Անոնցմէ ամենէն քիչ փիլիսոփայողներն են որ ամենէն ցայտուն պատասխանը տուած են մեզի, սահմանելով արդիւնաւոր կեանքը սա պարզ և անսեթեւեթ նախադասութեան մէջ: Անհատին կեանքը արդիւնաւոր է երբ ան անդադար եւ հետզհետեւ կը զարգանայ, օրըստօրէական զարգացման հա-

մեմատական կերպով ընդլայնելով նաև իր ծառայութեանց ասպարէզը, օգտակար հանգիստալու համար անմիջական շրջապատէն դուրս, իր համայնքին, ազգին և հանուր մարդկութեան: Այսպէս՝ երբ կեանքը շարունակական զարգացման շրջան մը ըլլայ, ըսել է ան՝ պիտի դառնայ կատարութիւնք պահանջներու հրահանգով անհատի շրջապատէն:

Պէտք է լաւ ըմբռնել նաև որ, երբ այդ պարտականութեանց շղթայի օղակներէն մին կամ միւսը անտեսուի, կամ ճիշդ ժամանակին չկատարուի, ահա այդ կէտէն կ'սկսի քայքայումը շղթայի օղակներուն վրայ, ո՛րքան ալ անարժէք երեւի անտեսուածը, որովհետեւ անոր պիտի յաջորդեն ուրիշներ ալ, և այդ երկու բնական բերումով, այնպէս որ կեանքը պիտի դառնայ մարդուն շուրջ խաժամուռ գործունէութիւններու կոյտ մը, անկապակից, աննպատակ և ապարդիւն արարքներու զէպ մը: Հետեւաբար, կրնանք ըսել որ, ամէն վայրկեան պահանջ մը ունի և այդ անտեղիտալի է, հրամայողական է, մեր ամբողջական գործունէութեան արդիւնաւորման տեսակէտով, կեանքի տեսակէտով:

Գիտակից անհատին պաշտօնը հոս ալ չի լրանար: Այն պարտաւոր է ա՛յնպէս կարգի դնել այդ օղակներու շարայարումը որ, պարտականութեանց այդ օղակներէն իւրաքանչիւրը ճիշդ իր տեղը ազդեցութեամբ ըլլայ և ատոր շնորհիւ ճիշդ ժամանակին և անպայման ի կատար ածուի այն: Անհատի յաջողութեան հիմնական կանոններէն մին է ասիկա: Մեր մշակած ծրագիրները ապարդիւն պիտի դառնան եթէ իւրաքանչիւր անջատ օղակ իր կարողութեան և արժէքին համապատասխան տեղն ու դիրքը չգրաւէ: Ներդաշնակ և անվրդով են այն կեանքներն ու հոգիները որոնք որոշ կերպով գիտեն իրենց ճիշդ առարկաներուն իւրաքանչիւրին իրական արժէքը եւ ծիրեր գծած են անոնց շուրջը, որպէսզի ունենան չկարենայ ոտնակոխել միւսին իրաւաց սահմանները: Աւելորդ չըլլա՞ր յիշել որ աշխարհի մեծագոյն և հեղինակաւոր առաջնորդները անոնք եղած են որոնք կրցած են կազմակերպել կեանքի արարքները, իւրաքանչիւր պահանջի իրեն արժանի դիրքն ու ժամանակը տալով, ջանացեր են գործադրել այդ

ծրագրերը անյողդողդ կամքով մը, հոգ չէ թէ յաճախ տկար ոյժերով և աննպաստ պայմաններու տակ, արտաքին ու ներքին ահռելի խոչնդոտներու դէմ պայքարելով: Օրինակներ են ասոր, համեստ խրճիթներէ բարձրացող Ռահվիրաներ, որոնք իրենց կարկառուն համրաւներն ու անունները՝ դարերուն փոխ են սուեր:

Այո՛, ծրագրերը և ամէն բանի իր տեղն ու արժէքը տալը ծանրութեան կեդրոններէն մէկն է յաջողութեան. շիտակ է նաև որ ըսկըսելը գործին կէսն է և լաւ մշակուած ծրագրերով մը սկսելը կէսէն ալ աւելին, սակայն ասկէ անդին կեանքը հեղասահ գետի մը նըման պիտի ընթանար խաղաղ, եթէ ճանապարհին գրկուած խութերը չըլլային անողորմ: Հոս է ահա որ ճգնաժամային պայքարի շիփորը կը հնչէ: Արգիւնաւորելու համար կեանքը, անհատը պարտաւոր է անխախտ շարունակել իր գործը, անզոսնելով այդ խոչնդոտները, անդդուելի կամքով և առնականօրէն կառչելու համար իր ծրագրին: Ծշմարիտ պայքարը անհատին և աշխարհի միջև ահա այդ է:

Բայց ինչո՞ւ յուսահատիլ: Վերջին տասնըհինգ տարուան մեր հաւաքական կեանքի փուլերուն մէջ, ո՛րքան դրուագներ կան հերոսական մարտնչումներու, պայքարներու և յաղթանակներու: Ամայի անապատներու մէջ շէներ և աւաններ, անզործութեան և քուէի երկիրներու մէջ գործունէութիւն և եռուզեռ, ցամաք հացի կարօտը պարտադրող ամիսներէ վերջ բաղդատաբար բարեկեցիկ Վիճակ մը ստեղծող հայ շինարար բազուկներ քիչ չեն եղած արդարեւ. և արդէն հայը շատ բան կ'արժէ... իբր անհատ...:

Անհատին բարոյական և հոգեկան ոյժերուն փորձաքարն է կեանքի ընթացքին զինք զիմորոշող այդ խութն ու արդեւքը, որուն վրայ տկար և թուլամորթ հոգիներ կ'ոյնան կէս անկնդան և կ'սկսին անիծել ճակատագիրը. իսկ հզօր նկարագրի տէր եղողներ կը տիրեն խարա՛կին ալ, կը կէ՛սին ալ, կեա՛նքին ալ և կը շարունակին երթալ դէպ ի առաջ: Եթէ մէկ կողմ գնենք քաղաքական վերջին հաղուադէպ և հսկայ վերիվայրումներու նման աղէտները և անոնց հետեւանքը կողո՛ւ ահաւոր զժրախտութիւնները, տարբեր

պարագաներու տակ շատերու յուսահատութեան և ուժաքամ իյնալուն մեծագոյն պատճառը իրենց անփութութիւններն, երկչոտութիւններն ու անճարակութիւնները եղած են. շեշտուած պակաս մը զօրաւոր կամքի և յատեւութեան:

Շատ քիչ կը հաւատամ անոնց որոնք կ'առարկին թէ զժրախտութիւնը օձիքնին թող տուած չէ որ իրենք ալ առիթն ունենային պարտականութիւնին կատարելու: Լաւ կ'ըլլայ անոնց ըսել որ, ամէն ատեն առիթներու շղթան ձեր ձեռքերուն մէջն էր, ունէ չնչին արգելքէ մը ցնցուելով՝ օղակներէն մին ձեռքէ փախցուցիք և հիմայ կը կարծէք որ դէպքերը վերիվայր չըլած են ձեր ծրագրերները: Յետոյ լաւ զիտնալու են անոնք որ առիթը չիզար մեղի գտնելու, հապա մեկն ըսեղծելու եկի գայն ծառայելու համար մեր նըմաններուն:

Զօրաւոր հոգի և հզօր կամք ունեցող անհատ մը հանճար մը ծնած ըլլալու պէտքը չի զգար, այլ իր ամէնօրեայ պարտականութեանց զիտակից աննկուն կամքի մը տակ կը պահէ իր պարտականութեանց կիրարկումը և առաթուր կոխտուելով ամէն խոչընդոտ յաղթանակներէն առաջ կը քալէ, ճամբու վերայ ալ առիթներ ստեղծելով ծառայելու իր միջավայրին կամ ազգին: Անհատական հզօր կամքի այս ոյժն է որ կը կոչենք Աստուածային ներշնչում. այլապէս մարդը ինչո՞վ պիտի տարբերէր անասունէն և բանաւորը՝ անրանէն: Մեր բանականութիւնն ու հոգեկան ոյժերն Տիրատուր, լիովին կը բաւարարեն յաղթելու աշխարհի և ժամանակի յարուցած զժուարթութեանց, երբ զիտնանք ըմբռնել վայրկեանին պահանջը, ճիշդ տեղն ու արժէքը տալ ունէ առարկայի մը և յաջատե կամքով հետապնդել անոր կիրարկումը, փոխանակ ազազուն տերեւի մը նման քշուելու ամէն հովէ կամ անդէկ նաւակի մը նման տարուբերուելու ամէն հոսանքէ: Ամենէն նեղ պարագաներու մէջ, հոգին հրաշքներ կը գործէ և այդ գերմարդկային ոյժը Աստուած կը ջամբէ իբր վարձատրութիւն մեր աննկուն ջանքերուն: Բայց ինչո՞ւ չուտ կը յուսահատինք:

Հարկաք

ՌԵՏՈՒՆԻ

(Շարունակելի)

ՄԱՐԴԿԱՅԻՆԸ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՁԷ

Տարիներ առաջ՝ Գերմանիոյ մէջ կոմսուհի մը կ'ապրէր որ հանդերձեալ կեանքի չէր հաւատար. երբ երեսուն տարեկան հասակին մեռաւ՝ յանձնարարեց որ իր գերեզմանաքարը կրանիթէ շինուի և անոր բոլորտիքը քառակողմ քարեր դրուին և թէ՛ կրանիթէ սալաքարը և թէ՛ անկիւնի քարերը իրարու ազուձուին երկաթեայ ծանր ձողիկներով: Պատուէրը կատարելին և քարին վրայ սապէս փորագրեցին. «Այս մշտնջենական քունի վայրը յաւիտենապէս մնալու գնուած է եւ երբէք բացուելու չէ»: Այսպէս գերեզմանին մէջ իսկ Ամենակարողը ուրացաւ:

Սակայն վարմանալի է ըսել թէ պզտիկ սերմ մը կը ծլի քարերու տակէն և անոր փափուկ ընծիւղը քարերու մէջէն տեղ կը գտնէ եւ կը մեծնայ յամրօրէն. սակայն անվտանգ և հաստատօրէն կ'ուռճանայ մինչեւ որ երկաթեայ ազուցուածքները կը ճեղքէ և կրանիթէ ահագին գերեզմանաքարը կը վերցուի մեծցող արմատներէն. հիմա մեծ ծառ մը կը կենայ գերեզմանին վրայ որուն քարերը անոր քով կը կենան:

Ջարմանալի է որ Հանովրի բնակչութիւնը աւելորդապաշտութեան զգացումով կը մեծաւրին գայն իրը Աստուծոյ պատասխանը երիտասարդ կոմսուհիին սաստիկ հակառակութեան: Որոշ է թէ իր գերեզմանը ապաստան չպիտի ըլլայ իրեն Աստուծոյ բարկութեան օրը, և թէ մեզմէ ամէն մէկը Քրիստոսի ատեանին առջեւ պիտի կայնին և այն ահալի օրը մեզի միակ ապաստանը Քրիստոս ինք պիտի ըլլայ: Թրգմ. Պ. Լ.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԱԿՆԱՐԿ ՄԸ
(Շարունակութիւն ճախորդ քիւիւն)

Գրեց ՏՐ. Ֆ. Ճ. ՍՈՒԷՆ

Ասկէ 150 տարի առաջ ելեքտրականութեան մասին մեր ծանօթութիւնը շատ քիչ աւելի էր քան այն իրականութիւնը՝ թէ սեճպոտ մը եթէ կատուի մորթով շփուէր թուղթի մանր փշուրները իրեն քաշելու ոյժը պիտի ստանար, թէ մոթին մէջ եթէ ան դիտուէր պիտի գտնուէր որ ան կապոյտ ջուր

մը կ'արտադրէր, և թէ այս երևոյթը չէր յայտնուէր Գուրի ներկայութեան:

Մէկը շատ վարմանալի պիտի գտնէ երբ խորհի թէ ելեքտրական ոյժը, որ այսօր այնքան բազմազան արտայայտութիւններ և կիրառումներ ունի և տակաւին այնքան թաքուն կարելիութիւններ կը պարունակէ, այնքան երկար ատեն անյայտ մնացեր է մարդկային քաղաքակրթութեան պատմութեան մէջ:

Մեծն Բրիտանիոյ Արքայական Հաստատութիւնը կոմս Բըմֆօրտի կողմէն հիմնուեցաւ 1799ին, «գիտութիւնը և օգտակար ծանօթութիւնը քաջալերելու և տարածելու» նըպատակով: ԺԹ. դարու սկիզբը նոյն հաստատութեան մէջ Սըր Հըմֆրի Տէյլօրի կողմէն է տրուած դասախօսութեանց կը յաճախէր նաև կազմարարի երիտասարդ աշակերտ մը, որուն եռանդը այնչափ խոր ազդեց դասախօսին վրայ որ այն պատճառ եղաւ երիտասարդին իբր օգնական ընդունուելուն այդ հաստատութեան մէջ: Դժբաղդարար այդ տեսները գիտական ճիւղի մէջ օգնականները առանց վճարումի կ'աշխատէին. բայց կազմարարի աշակերտը, որ Միքայէլ Ֆարատէյ կը կոչուէր, իր ապրուստին համար դրամի կը կարօտէր, հետեւաբար հաստատութեան մէջ գոնապանի և մաքրողի թոշակաւոր պաշտօնը ստանձնեց՝ պէտքերը հոգալու համար: Չեմ գիտեր թէ որչափ հաւատարմարար կատարեց իր գոնապանութեան պարտականութիւնները. թերեւս ան նոյն իսկ աշխատանոյի պատուհանները մաքրելու մէջ թերացած ըլլայ, բայց այսչափը յայտնի է որ ան գիտութեան պատուհանները լաւ մաքրեց. թերեւս ան պատերու վրայէն սարդի ոստայնները սրբելու մէջ թերացած ըլլայ, բայց շատ որոշ է որ գիտութեան հորիզոնէն անոնցմէ շատերը սրբեց մաքրեց:

Արդէն ծանօթ իրողութիւն մ'էր թէ հոսանք տանող թելերը շատ մը կէտերու մէջ մազնիսներու յատկանիշերն ունին. բայց Ֆարատէյի վիճակեցաւ գտնել թէ ելեքտրական հոսանքը միայն քիմիական բաղադրութիւններու միջոցաւ չ'արտադրուիր, իրեն անկ եղաւ գտնել այն հիմնական սկզբունքները որոնց վրայ հիմնուած է այսօր ելեքտրական ճարտարագիտութիւնը: Ֆրանսայի մէջ Ամփէրի, Անգլիոյ մէջ Ֆարատէյի և Ա-

մերկայի մէջ Հէնրիի միջոցաւ գտնուած այն բոլոր իրողութիւնները որոնք ելեքտրականութիւնը կը կառավարեն այսօր, և որոնք մեզի կը սորվեցնեն թէ ի՞նչպէս պէտք է շինել ոյժ արտադրող մեքենաները, շարժիչ մեքենաները և այլն: Բայց այս իրողութիւններու իրարու հետ ունեցած յարաբերութիւնները նաև տիեզերական սկզբունքներու անոնց ունեցած յարաբերութիւնը գտնել վիճակեցաւ Քլըք Մաքսուէլը:

Մաքսուէլ մեծ մաթեմատիկոս մ'էր, որուն տարիներու աշխատանքի իբր արդիւնք՝ գրած գիրքը մեզի ծառայեց մեր գաղափարները ձևակերպելու ելեքտրական գիտութեան ըմբռնումին մէջ: Փորձառական մեթոտով ստացուած բոլոր իրողութիւնները գրութեան մը վերածեց ան, անոնց փոխ յարաբերութիւնները ճշդեց, և աւելի մեծ ճշմարտութեան հետ ներգաշնակեց: Այս կերպով այս մեծ խորհողը իր նախորդներուն գիտելիքը հասկնալու համար համադրական ծրագիր մը, գաղափար մը գտաւ, որուն միջոցաւ այն եզրակացուց՝ թէ ամէն տեղ լեցնող փոխանցումի միջոցի (միտիում)ի մը մէջ ելեքտրամագնիսական երևոյթները ալիքներու ձևով յառաջ կուգան, թէ այս ալիքներէ ոմանք լոյսի ալիքներու յատկութիւններն ունին, և թէ բոլորն ալ լոյսի ալիքներու արագութեամբ կը շարժին:

Հէրցի, Լաճի, Մարքսնիի փորձերը և գիտելիքը հաստատեցին այս մեծ գիտունին եզրակացութիւններուն ճշմարտութիւնը: Ատկէ ի վեր ելեքտրագիտական զարգացումը իր ամէն փուլին մէջ Մաքսուէլի մեծ երկին մէջ գրուած սկզբունքներու վրայ կատարուած է: Մաքսուէլէ վերջ գիտական յառաջգիմութիւնը դարձեալ զաղար մը առաւ, որ շատերուն խորհիլ տուաւ թէ գիտութիւնը իր հորիզոնին ծայրը հասած է:

Անիտիեց Տ. Ճ. Խ.



ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ճէպէլ Աքրայի փէշերուն վրայ Քէսապի շրջանակին մէջ Քէօրքէնէ գիւղի Հայ. Աւետ. եկեղեցին Միութեան դիմած էր որ իր քարոզիչը՝ Պատ. Ա. Պէրպէրեան հովիւ ձեռնադրուի: Հալէպի Շրջանային Գործադիր Մարմինը, որուն յանձնուած էր այս գիմումին նշկատառումը, որոշեց եկեղեցիին փափաքին գոհացում տալ և հրաւիրեց անոր քարոզիչը որ Հալէպ գալ ձեռնադրուելու համար:

Ձեռնադրութեան հանդէսէն առաջ քննիչ մարմնի մը կողմանէ Պատ. Ա. Պէրպէրեանի քննութիւնը կատարուեցաւ հոկտ. 27ին, Ա. գիգիյէի եկեղեցիին մէջ, ուր խուռն բազմութիւն մը փութացած էր տեղ գրաւել: Քննութիւնը սկսաւ ժամը 7.15ին, Պատ. Ա. Պէրպէրեանի ընթերցումով իր երկար մէկ գրութեան, որուն մէջ ան առաջին անգամ պատմեց իր մէկ կարճ կենսագրութիւնը եւ հոգեւոր փորձառութիւնը և ապա պարզեց իր դաւանանքը կրօնքի, Աստուծոյ, Քրիստոսի, Ս. Հոգիի, մեղքի, փրկութեան, Ս. Դըրքի, և հանդերձեալ կեանքի մասին: Ապա քննիչ ժողովին նախագահը, Վեր. Կ. Յարութիւնեան հրաւիրեց ժողովականները ընելու իրենց հարցումները: Քննութիւնը շատ հետաքրքրական անցաւ, որուն աւարտելէն վերջ քննիչ մասնախումբը կարճատե նիստ մը ունեցաւ և որոշեց Հոկտ. 28 ին, Կիրակի կէսօրէ վերջ ժամը 2 ին, Պատ. Ա. Պէրպէրեանը Քէօրքէնէի եկեղեցիին համար աւետարանիչ ձեռնադրել:

Պատ. Ա. Պէրպէրեան 1885ին ծնած է Կէմէրէք, Սիբաստիա. իր ուսումը առած է իր բնավայրը, ապա (1899-1905) Անաթոլիա Գոլէճի մէջ և 1910ին տարի մ'աւ Տարսուսի Գոլէճին մէջ: 1925ին Աթէնքի Կրօնական Վարժարանի աստուածաբանական ճիւղը աւարտելով իբր քարոզիչ պաշտօնավարելու համար Քէօրքէնէ հրաւիրուած է, ուր իր եռամեայ գործունէութեամբը գոհ ձգած է իր եկեղեցին:

Ձեռնադրութեան հանդէսը կատարուեցաւ յոգնախումբն բազմութեան մը ներկայութեան Ագիւղիյէ եկեղեցիին մէջ: Ձեռնադիր մասնախումբի անդամներն էին Վեր. Կ. Յա-

ընթերցանան, Վեր. Ա. Շիրաճեան, Վեր. Կ. Բէթէնճեան, Տր. Զ. Մէրըլ, Վեր. Է. Փարթըրիճ, Երիցական Պօրտէն Վեր. Ուիտըրսփուն, Վեր. Շթօլֆըս եւ Սրաբ Բող. հովիւ Վեր. Ապտիւլքէրիմ: Տր. Զ. Մէրըլ Ձեռնադրութեան քարոզը տուաւ. որուն նիւթն էր «Լ՞նչ է քարոզիչի մը գործը», եւ ըսաւ թէ քարոզչը պէտք է ծանուցանէ, սորվեցնէ, բժշկէ եւ կ'արգադրէ:

Ձեռնադրութեան աղօթքը կատարեց Վեր. Կ. Յարութիւնեան, մինչ ձեռնադիր մասնախումբին անդամները շրջապատած էին ծնրագիր հովիւցուն՝ զնեղով իրենց ձեռքերը անոր զլիսուն վրայ: Այս պահուն ստեղծուեցաւ հոգեկան վերացուցիչ մթնոլորտ մը եւ հանդիսականները խոր կերպով զգացին հոգեշունչ աղօթքին ներշնչիչ ազդեցութիւնը: Սպա Վեր. Կ. Բէթէնճեան նոր ձեռնադրեալը հովիւներու կարգը ընդունեց՝ իրեն յատուկ պարզ բայց սիրուն եւ ազդեցիկ բառերով: Վեր. Է. Փարթըրիճ խօսեցաւ «Լ՞նչ պէտք է քարոզել» նիւթին վրայ եւ յայտնեց թէ պէտք է քարոզել Յիսուս Բրիստոսը իբր ուղեցոյց ունենալով Ս. Դիրքը եւ հիմնուելով մեր անձնական փորձառութեան վրայ: Վերջին խօսողն էր Վեր. Ապտիւլքէրիմ, որ ըսաւ թէ հովիւ մը պէտք է ունենայ հետեւեալ չորս բարոյական յատկութիւնները, անկեղծութիւն, անձնագոհութիւն, խոնարհութիւն եւ համբերութիւն:

Հանդէսը անցաւ շատ լուրջ եւ արդարեւ, որուն մէջ իր մասնաւոր բաժինը ունեցաւ Ազիլիյէ Ե. Բ. Ջանից Միութեանց նորակազմ երգչախումբը, իր երկու գեղեցիկ եւ յաջող երգեցողութիւններով: Հանդէսը լրացաւ նոր ձեռնադրեալին օրհնութեան աղօթքով:

ՆՈՐ ՀԻՒՐԵՐ

«Փրէնտզ ալ Արմէնիա» ընկերութիւնը, ծանօթ իր հայտնապատ գործնէութեամբը եւ օգտակար ծառայութեամբը, վերջերս Սուրիոյ մէջ Հայ գաղթականներու հաստատման համար 3000 անգլիական օսկի տրամադրած էր: Այս ընկերութեան կողմէ հոկ. 29ին քաղաքս ժամանեց Միս Րէտ Կրէյվ Միս Փէթըրսընի ընկերակցութեամբ: Միս Րէտ Կրէյվ, հարուստ Անգլուհի մը եւ պատուոյ քարտուղարը իր ընկերութեան, ճամբան ժընէվ հանդիպած

եւ Ազգերու Դաշնակցութեան պաշտօնական տնօրէն հետ տեսակցած է: Այս հայասէր օրիորդը՝ որ ջերմօրէն կը շահագրգռուի Հայ գաղթականներով եւ այցելած է զանոնք թէ իրագի եւ թէ՛ Սուրիոյ մէջ ասկէ առաջ՝ կ'ուզէ անձամբ տեսնել նորահաստատ գիւղերու հիւանդացած գաղթականներու թշուառ վիճակը: Կը յուսանք թէ այս այցելութենէն վերջ տեղաւորուած գաղթականներու կացութիւնը հիմնապէս պիտի բարւոքի: Միս Րէտ Կրէյվ իր ուսումնասիրութիւնը կատարելէ վերջ պիտի մեկնի իսկ Միս Փէթըրսըն հոս պիտի մնայ գործակցելու Միս Եփէի:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԿԱՄԱՒՈՐ ԳԵՐԻՆ

(Շարունակութիւն նախորդ թիւէն եւ վերջ)

Բիշ Էտքը Վէնսան տը Փօլ լուրորովին ազատ տրձակուեցաւ: Ու այնուհետեւ զինքը կը տեսնենք ամեն տեսակ բարեգործութեանց մէջ: Հիւանդանոցները կ'այցելէր: Հիւանդաները իր ներկայութենէն այնքան ուրախութիւն եւ իր խօսքերէն այնքան մխիթարութիւն կ'զգային որ վերջապէս սկսան խորհիլ թէ աս մարդը հասարակ մարդոցմէ տարբեր բան մ'ունէր իր մէջ, թէ ան երկինքէն զըրկուած մասնաւոր առաքեալ մ'էր:

Այնուհետեւ կը տեսնենք զինքը Ժօանի Դուքսին տունը՝ ուր կը յաճախէր որպէս ընտանեկան գաստիարակ: Այս դուքսը Պրէսթի, Մարսիլիայի եւ Ֆրանսական ուրիշ նաւահանգիստներու մէջ գտնուող նաւերուն ընդհանուր քննիչն էր, շատ անգամ կ'երթար աչքէ անցնելու նաւերն ու անոնց մէջ աշխատող շրջապակապ գերիները՝ որոնք ցկեանս դատապարտուած էին թի քաշելու: Այս թըշուառ գերիներուն խղճալի վիճակը, անոնց անյոյս հոգիներու սրտի խորերէն բխող հառաչանքները շատ կ'ազդէին Կոմսին վրայ՝ որ բնութեամբ զգայուն ու ազնիւ անձնաւորութիւն մ'էր: Վէնսան տը Փօլ շատ դժուարութիւն չունեցաւ անկէ թոյլտուութիւն ստանալու՝ որպէսզի իր պարապ ժամանակները նաւաստիներուն մէջ անցնէ զանոնք մխիթարելու նպատակաւ: Իր այցելութիւնները այնքան օգտակար ու հաճելի արդիւնք ունեցան՝ որ մասնաւոր պատուիրակութիւն մը Լուի ԺԳ. թագաւորին քով երթալով խընդ-

րից որ այս հեղանամբոյր քահանան արքայական հրովարտակով պաշտօնապէս քննիչ կարգուէր Յրանա. նաւերու թիավարներուն: Ու թագաւորը այս խնդիրքը սիրով կատարեց:

Երբ այս երիտասարդ քահանան Մարսիլիոյ ծովեզրը գտնուող նաւու մը մէջ իր զիննութիւնները կը կատարէր, հոն՝ գերիներուն մէջ տեսաւ անձ մը՝ որ իր չափազանց տխուր դէմքով, աննման նայուածքովը բոլոր միւսներուն վիշտը կը գերազանցէր: Իսկոյն անոր մօտեցաւ, և իրատ մեղմ վարքով ու ազնիւ բառերով ջանաց անոր անպատմիկ վիշտին պատճառն իմանալ: «Ոհ», պատասխանեց այս երիտասարդ գերին կսկծալի եղանակով մը, «իմ կրած նեղութիւններն ու չինչ են այն թշուառ ու խզճալի կացութեան քով՝ որուն մէջ անօթի ու խեղճ կ'ապրին իմ սգակիր կիներս ու անմեղ մանուկներս, անոնց վիշտին չեմ կրնար զիմանալ,» ու արցունքներն յորդառատ հոսեցան օժիւղին այտերն ի վար: ...Քահանան վայրկեան մը լուռ մը տածելէ վերջ ինչ որոշեց ընել կը կարծէք: ... Իր ընթացքը անանկ պարագայի մը մէջ դժուար թէ օրինակելի վիճակ մ'էր, և սաւ կայն ան իր մէջ կը ցուցադրէր անձնազոհութեան ամենաբարձր աստիճանը:

Բանաւան իր տեղը փոխեց գերիին հետ: Ինքը իր վրան առաւ գերութեան չղթանիքը՝ ու սկսաւ միւսներուն նման ու անոնց հետ միասին թի քաշել: Իսկ գերին ազատած իր տունը գնաց: Խեղճ քահանան իր փափուկ կալմով չը դիմացաւ գերիի այդ կոշտ աշխատանքին, ու այդ չղթայակիր չարչարանաց ազդեցութիւնը իր մարմնոյն վրայ կրեց մինչեւ իր մահը: Շատ աշխատեցաւ որ այս դէպքը գաղտնի մնայ, սակայն չը յաջողեցաւ:

Իր գերութեան օրով մեծ փոփոխութիւններ եղան թիավարներուն ապրելակերպին մէջ, շատեր զարձի եկան ու փոխանակ դժգոհութեան՝ սիրով, համբերութեամբ ու հաւատարմութեամբ կը կատարէին իրենց տաժանիկի աշխատութիւնը: Օրուան կառավարութիւնը վայս նկատելով աւելի խնամք ցոյց տուաւ անոնց հանգէպ, մասնաւոր հիւանդանոցներ շինել տրուեցան գերիներուն համար, ու իրենց այս վիճակը քահանային ամբողջ կեանքի տեղութեան միջոցին շարունակեց:

Իր կեանքի վերջին մասը անցուց բարեք գործելով ու բարենպատակ հաստատութիւններ հիմնելով: Գերութեան թոյրերու կարգը իր գործն է, նոյնպէս Լազարիսթ եղբայր անձնուէր գործունէութիւնը իր մտքին ծնունդն է: Հարիւրաւոր գերիներուն ազատութիւնը ձեռք ձգեց զբամ հաւաքելով ու զանոնք իրենց տէրերէն ծախսու աւանդով:

Չորմանալի չէ որ իր մահէն վերջ (1660) Բրիտանիայ եկեղեցին վայն սրբոց դասն անցուց:

Գերեզմանութեան այդ ստորին սովորութիւնը իր մահէն վերջն ալ շարունակեց մինչեւ 1816, երբ Անգլիական ու Ֆրանսական նաւատորմերը միասին ջախջախեցին Ալճերիոյ այդ գերեզմանութեան որջը:

Այնուհետեւ մինչեւ այսօր Ալճերիա Ֆրանսական գաղութ մ'է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԻՐԲԱԳՐԱԿԱՆ

«Հիմնադիրներու Օր»ուն Առթիւ

ՏՐ. Ժ. ՄԷՐԸԼ

ՅՕԴՈՒԱՄԵՆԵՐ

Կեանքը ինքն իր մէջ

ՌԵՏՈՒՆԻ

Մարդկայինը յաւիտեական չէ

ԹՐԳ. Պ. Լ.

Պատմութիւնը բնական գիտութեանց

ՏՐ. Ֆ. Ժ. Ս.

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկշաբաթաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ժ. Որլոբեան

ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիտ

Արտատահման » » 1 Տոլար

Հասցէ—

NOR AVEDAPER

B. P. 287

ALEP SYRIE